«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ազգային արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասերին

ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Մարտիրոսյան Վրույր Գևորգի
ՄԱՐԶ	Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայրենյացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն…….3

Գլուխ 1 Ազգային արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասերին

1.1 Արժեք և արժեքային համակարգ……..…4

1.2 Արժեքային համակարգի ձևավորում……..….6

1.3 Պատմության դասերը որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց……10

Եզրակացություն……...….15

Գրականության ցանկ……16

Ներածություն

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական, բովանդակային բազմաթիվ փոփոխություններն իրենց անմիջական գործունեությունն են ունենում անձի ձևավորման, արժեքային համակարգի փոփոխման, սոցիալականացման վրա: Սոցիալական ինստիտուտները երբեմն դժվարանում են իրականացնել իրենց գործառույթները, քանի որ տեղի է ունեցել բարոյամշակութային արժեքների վերաիմաստավորում: Անձի սոցիալականացման տարբեր փուլերի ընթացքում խոր հակասություններ են ստեղծվում համամարդկային և ազգային, հասարակական և անձնային արժեքների միջև:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, նախասիրություններով, կողմնորոշումներով, և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից: Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ազգային արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասերին:

Աշխատանքի խնդիրներն են ուսումնասիրել արժեքային համակարգը և դրա ձևավորումը, ներկայացնել պատմության դասերը որպես ազգային արժեքների ձևավորման միջոց:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, ենթագլուխներից եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքի 16 էջ:

Գլուխ 1 Ազգային արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասերին

1.1 Արժեք և արժեքային համակարգ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է:[1]

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը

[1] Զեյնալյան Նանե, Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհահայացքային նախադրյալները, Հանրային կառավարում, 3-4/2017, էջ 44

ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Լայն ըմբռնմամբ՝ արժեքն աշխարհի անհատականորեն գունավորված ընկալումն է, որն առաջանում է տեղեկատվության, գիտելիքի և սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքը ցանկացած երևույթի, առարկայի, օբյեկտի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության սուբյեկտիվ նշանակությունն է մարդու համար: Լայն ըմբռնմամբ՝ արժեքը վերաբերմունք է, գնահատական, որ կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական: Նեղ ըմբռնմամբ՝ արժեքն իրի, առարկայի, երևույթի, արարքի, գործողության, գործունեության, հարաբերության դրական նշանակությունն է մարդու համար: Այս իմաստով՝ արժեքը կենսականորեն կարևորն է, նշանակալիցը, որը հուզական և իմաստային գնահատման է ենթարկվում սուբյեկտի (անհատ, խումբ, հասարակություն, ազգ) կողմից և ուղղորդում նրա գործունեությունը որոշակի չափանիշների (իդեալի, նշանակության) տեսանկյունից:

Արժեհամակարգը որոշակի անհատի կամ հանրույթի հոգևոր-բարոյական, գաղափարական-աշխարհայացքային պատկերացումների ընդհանրացված գումարն է (summa), որը դառնում է անհատի, հանրույթի հոգեկերտվածքի բնութագիր:[2]

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ

[2] ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները/ Սարգսյան Ա. և ուրիշ.- Եր.: Տնտեսագետ, 2014. էջ 17

հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքային համակարգն ազգային ու մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության ամենակարևոր բաղադրիչն է: Արժեհամակարգը ձևավորող ոլորտներն են ընտանիքը, գիտակրթական, մշակութային հաստատությունները, պետական, քաղաքական ինստիտուտները, ԶԼՄները, ազգային պատմության և ավանդույթների յուրացումն ու իմաստավորումը: Երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը (դեռևս սոփեստներից եկող մոտեցում), արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

1.2 Արժեքային համակարգի ձևավորում

Ժամանակակից գլոբալացումն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն է թողնում մարդու արժեհամակարգի վրա: Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ-մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում ազգային յուրահատկություններին, ինչն էլ խանգարում է ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես՝ երեխայի դաստիարակությանը: Այսօր հասարակություն են ներթափանցել արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ

համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև:[3]

Տարիքային շրջաբաժանմանը զուգընթաց փոփոխվում են բարոյամշակութային արժեքները, որոնք ուղղակիորեն արտահայտվում են անձի աշխարհայացքում, դաստիարակվածության, կրթվածության, զարգացվածության մակարդակում, վարքագծում, հաղորդակցական մոդելներում: Համաշխարհայնացմամբ պայմանավորված հասարակական արժեքների ձևավորման հիմքում ընկած քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործոններ երբեմն խոչընդոտում են ուսանողի անձի ներդաշնակ և լիարժեք ձևավորմանը: Ուսանողների շրջանում բարոյամշակութային արժեքների ուսումնասիրությունը փաստում է, որ հիմնախնդրի քննարկումը կարևոր է, արդիական և հրատապ:[4]

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի

---

[3] Աշիկյան Ա., Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում , էջ 335

[4] Սարգսյան Ա., Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, էջ 354

(ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:[5]

Ազգային արժեքների ձևավորման առաջնային կառույցը ընտանիքն է, որտեղ դրանք գերակայում են մյուս արժեքներին: Անձի սոցիալականացման ընթացքում՝ մյուս սոցիալական ինստիտուտներում՝ «կրոն», «մշակույթ», արժեքների հարաբերակցությունը փոխվում է. գերակայում են հոգևոր, համամարդկային, մասնագիտական արժեքները: Այդ գերակայությունը կարող է դրսևորվել փոխլրացմամբ, եթե անձի անհատական հատկանիշները ներդաշնակվում են հասարակության մեջ ընդունելի բարոյամշակութային արժեքների հետ: Սոցիալական յուրաքանչյուր ինստիտուտ բաց գործուն համակարգ է, որտեղ կենսական, սոցիալական, քաղաքական, բարոյական, կրոնական արժեքների համակարգերը դրսևորվում են երկու մակարդակում՝ ազգային և համամարդկային: Մեր կարծիքով՝ ցանկացած սոցիալական ինստիտուտի գերակա խնդիրն է ազգային արժեքների

[5] Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

ներդաշնակումը, հայապահպանման գործընթացների ապահովումը: Իսկ դա հնարավոր է, եթե համապատասխան սոցիալական ինստիտուտում ազգային, մշակութային, բարոյական, ինքնության արժեքները փոխանցվեն միջսերնդային համագործակցությամբ:

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք:
- Ունենա ազգային ինքնագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . .

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեհամակարգի հենքի վրա կառուցված գործողությունները հանրորեն ճանաչելի են և ընդունելի: Այս տեսակետից կարևոր է քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Այս համատեքստում բարձր դասարանի աշակերտը պետք է ընդհանուր գիտելիքներ ունենա սեփական իրավունքների մասին, «հարգի հասակակիցների իրավունքները՝ անկախ սեռից, ռասայից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, ազգությունից, գիտակցի բոլորի հավասարության սկզբունքը: Կրթական համակարգի հիմքում պետք է ամրագրված լինի աշակերտի մեջ կրթության նկատմամբ հարգանքի, նրա դերի և նշանակության կարևորման, ամբողջ կյանքի ընթացքում կրթվելու ցանկության և կարողության ձևավորումը»:

1.3 Պատմության դասերը որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց

Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը:

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա

շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:[6]

Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, ապագա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են. այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության զգացում, ինքնուրույնություն և այլն: Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է զանգվածային տեղեկատվական միջոցների դերը, որոնցում ներկայացվող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերն իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա: Եթե ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, ազգային արժեհամակարգին խորթ և հաճախ անհարիր արժեքները, սոցիալական բացասական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծանում է, և, ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անարժեք, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա միանգամայն հավանական է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: Ծնողները, խրախուսելով կամ հանդիմանելով, ամրապնդում կամ կասեցնում են տվյալ վարքի և արժեքային պատկերացումների ձևավորումը:

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը

[6] Աշիկյան Ա., Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում , էջ 339:

երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:[7]

Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ուխորհուրդը: Առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավանդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլևնրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտած-ստեղծածը, նրա ոգին ուհոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին: Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիսիրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

«Պատմություն» առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից անհատի և քաղաքացու ձևավորումն է:

Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1.Սովորողներին տալ հնարավորություն ունենալ գիտելիքներ և պատկերացումներ հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց և համաշխարհային պատմության մասին, որոնց միջոցով կձևավորվի և կամրապնդվի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը:

[7] Մրտեյան Ա., Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 1.2019, էջ 182:

2.Գաղափար տալ հայ և համաշխարհային մշակույթի, քաղաքակրթության, նրա առանձնացման ու զարգացման օրինաչափությունների և առանձնահատկություն-ների վերաբերյալ:

3.Դաստիարակել հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, պետության և քաղաքացու նկատմամբ արժանապատվություն և հպարտություն:

4.Հասնել այն բանին, որ իր ազգի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման գործին:

5.Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

6.Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու կարողություններ:

7.Զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի ու ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ և հմտություններ:

Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռքբերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

Եզրակացություն

Այսպիսով, նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Հայ ժողովրդի պատմությունը հարուստ է ազգային արժեքներով: Այդ արժեքները վերարտադրվում են մշակույթի միջոցով՝ որպես արվեստի և գրականության ստեղծագործություններ, ուսուցման և դաստիարակության միջոցներ:

Գրականության ցանկ

1. Աշիկյան Ա., Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում, էջ 335-341:
2. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:
3. Զեյնալյան Նանե, Անձի արժեհամակարգի ձևավորման աշխարհահայացքային նախադրյալները, Հանրային կառավարում, 3-4/2017, էջ 44-53:
4. ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները/ Սարգսյան Ա. և ուրիշ.- Եր.: Տնտեսագետ, 2014, 88 էջ
5. Մրտեյան Ա., Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 1.2019, էջ 177-182:
6. Սարգսյան Ա., Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, էջ 354-358:
7. http://www.ysu.am/files/18-1549440667-.pdf
8. https://asue.am/upload/files/amberd/AMberd10.pdf